ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 16 դեկտեմբերի 2024 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Վաղարշյանի

Անդամակցությամբ՝ Հ. Հովակիմյանի

Վ. Գրիգորյանի

Քննության առնելով Արթուր Գևորգյանի անհատական
դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Արթուր Գևորգյանի (այսուհետ՝ Դիմող) դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականի դեկտեմբերի 4-ին:

Դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է.

«ՀՀ ընտանեկան օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով այն ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայությամբ ալիմենտի չափը դատական կարգով որոշելուց հետո յուրաքանչյուր կողմի պահանջով ալիմենտի սահ-

մանված չափը դատական կարգով փոփոխելու հնարավորությունը պայմանավորում է կողմերի և՛ գույքային և՛ ընտանեկան դրության միաժամանակյա փոփոխությամբ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 36-րդ, 37-րդ և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:

2. Ներկայացնելով թիվ ԵԴ/62386/02/22 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասը մեկնաբանելիս ՀՀ դատարանները ելել են դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից և, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հանգել են եզրակացության, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասում «գույքային» և «ընտանեկան» բառերի միջև առկա «և» շաղկապը պարտադիր է դարձնում դրանով կապակցված երկու պայմանների միաժամանակյա առկայությունը:

Դիմողը գտնում է, որ ՀՀ դատարաններն ալիմենտի չափի փոփոխությունը սահմանափակել են ալիմենտային հարաբերությունների մասնակիցների միայն ընտանեկան և գույքային դրության փոփոխությամբ, մինչդեռ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասն ալիմենտի չափի փոփոխման հնարավորությունը պայմանավորում է ոչ միայն ընտանեկան կամ գույքային դրության փոփոխությամբ, այլև կողմերի՝ ուշադրության արժանի այլ շահերով, և բոլորովին պարտադիր չէ, որ այդպիսի փոփոխությունները տեղի ունենան միաժամանակ: Հավելելով՝ Դիմողը պնդում է, որ ալիմենտային պարտավորության փոփոխման հիմք կարող է հանդիսանալ և իրավակիրառ պրակտիկայում հանդիսանում է կա՛մ միայն ընտանեկան դրության փոփոխությունը, կա՛մ միայն գույքային դրության փոփոխությունը:

Ըստ Դիմողի՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասին ՀՀ դատարանների կողմից տրված մեկնաբանությունն իրավական առումով ո՛չ տեսականորեն, և ո՛չ էլ գործնականում կենսունակ չէ, այն չի բխում ո՛չ ՀՀ ընտանեկան օրենսգրքից, ո՛չ էլ օբյեկտիվ իրականությունից, հետևաբար՝ անհիմն է և ոչ իրավաչափ, այդ թվում՝ հակասահմանադրական:

Դիմողը նշում է, որ «(...) թե՛ կալանավորելը, թե՛ ամսական 200.000 ՀՀ դրամի չափով ալիմենտ վճարելու պարտավորություն սահմանելը ստեղծել է (սահմանել է)

պետությունը միաժամանակ, որի դեպքում, այսինքն՝ այն դեպքում, երբ այդ երկու պայմանները ժամանակային առումով համընկնում են, պետությունը պետք է սահմանի նաև այդ պայմանները զուգակցելու հնարավորություն» այնպես, որ չտուժեն երեխաների՝ ալիմենտ ստանալու և իր (ծնողի)՝ բավարար կենսամակարդակի իրավունքները, ինչը պետությունը չի արել: Հավելելով՝ Դիմողի պնդմամբ՝ նշված պայմաններում տուժում են Սահմանադրությամբ ամրագրված այլ իրավունքներ ևս, օրինակ՝ երեխաների՝ ծնողի հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունքը (Սահմանադրության 37-րդ հոդվածի 3-րդ մաս) և իր՝ երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին հոգ տանելու, այդ թվում՝ երեխաների հետ տեսակցելու՝ դատական ակտով ճանաչված իրավունքը (Սահմանադրության 36-րդ հոդված), որը կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում կալանքի տակ գտնվող անձի համար որևէ կերպ չի ապահովվում այն դեպքում, երբ պետությունը պարտավոր է ապահովել դատական ակտի կատարումը դրանց հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

Արդյունքում՝ Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը կիրառելիս, այդ թվում՝ այն մարդու հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությամբ ամրագրված դրույթների հաշվառմամբ մեկնաբանելիս, ներպետական իրավակիրառ պրակտիկան հաշվի չի առնում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի դրույթները և հակասում է դրանց:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքներից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված* ***նորմատիվ***

իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, *ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում* ***առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ «*(…) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը,* ***ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:***

Սահմանադրական դատարանի դատական կազմը հարկ է համարում ընդգծել, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման, այլ՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության գնահատման հարցեր:

Այսինքն՝ Սահմանադրական դատարանում քննության առարկա կարող է լինել բացառապես նորմատիվ ակտի դրույթի, դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության և (կամ) դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի սահմանադրականության գնահատումը:

Սահմանադրական դատարանի դատական կազմը, ուսումնասիրելով սույն դիմումը և դրան կից փաստաթղթերը, եկել է եզրակացության, որ դիմողի կողմից բարձրացված հարցը **ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն անհատական դիմումով Դիմողը, ձևականորեն վիճարկելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) սահմանադրականությունը, **ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթի կիրառման իրավաչափության հարց**:

Այսպես՝ Դիմողն իր անհատական դիմումով ներկայացրել է դիրքորոշում առ այն, որ *«(...) տվյալ գործով դատարանների մոտեցումն իրավաչափ չէ ինչպես այն պատճառով, որ նման մոտեցումն իսպառ անտեսում է Դիմողի, որպես, նախ և առաջ, մարդու և քաղաքացու, ապա՝ նաև որպես ծնողի, գույքային և ուշադրության արժանի այլ շահերը, այնպես էլ այն պատճառով, որ դատարաններն ըստ էության չեն լուծել օրենքով իրենց առջև դրված խնդիրը՝ ապահովել ալիմենտային հարաբերությունների մասնակիցների գույքային և ուշադրության արժանի այլ շահերի ողջամիտ հարաբերակցությունը, իսկ այդ մոտեցումները, որը ցուցաբերել են դատարանները՝ հակասում են ՀՀ Սահմանադրությանը»:*

Դիմողը նաև նշել է. *«(...) Հայաստանի Հանրապետությունը, մի կողմից, ճանաչում է Դիմողի բավարար կենսամակարդակի իրավունքը և միջազգային-իրավական մակարդակով ստանձնում է այդ իրավունքի կենսագործումն ապահովելու պարտավորություն, մյուս կողմից, խախտում է Դիմողի այդ իրավունքը՝ ի դեմս դատարանների Դիմողին կալանավորելով և այդ ընթացքում Դիմողի ալիմենտ վճարելու պարտականությունը չփոփոխելով՝ ալիմենտի չափը չնվազեցնելով»:*

Դիմողի կողմից բարձրացված հարցի կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատական կազմը հարկ է համարում արձանագրել նաև հետևյալը.

վիճարկվող՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ դատարանը կարող է յուրաքանչյուր կողմի պահանջով փոփոխել ալիմենտի սահմանված չափը կամ ալիմենտ վճարելու պարտավոր անձին ազատել դա վճարելուց այն դեպքերում, երբ ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայությամբ ալիմենտի չափը դատական կարգով որոշելուց հետո փոփոխվել է կողմերից մեկի գույքային և ընտանեկան դրությունը: Այսինքն՝ օրենսդիրը հստակ սահմանել է, որ ալիմենտի չափը դատական կարգով որոշելուց հետո կողմերից մեկի գույքային և ընտանեկան դրության փոփոխության արդյունքում յուրաքանչյուր կողմի պահանջով

ալիմենտի սահմանված չափը փոփոխելը կամ ալիմենտ վճարելու պարտավոր անձին դա վճարելուց ազատելը դատարանի հայեցողական լիազորությունն է: Ընդ որում՝ քննարկվող համատեքստում անձի գույքային և ընտանեկան դրության փոփոխությունը դատարանի կողմից ենթակա է յուրաքանչյուր գործով առանձին գնահատման՝ հաշվի առնելով տվյալ կոնկրետ գործի փաստական հանգամանքները, առանձնահատկությունները և կողմերի ներկայացրած հիմնավորումները: Ավելին՝ սույն պարագայում թիվ ԵԴ/62386/02/22 քաղաքացիական գործի շրջանակներում ևս ՀՀ դատարանները, իրացնելով օրենսդրի կողմից՝ քննարկվող համատեքստում ալիմենտի չափը փոփոխելու, սույն պարագայում՝ նվազեցնելու մասով իրենց վերապահված հայեցողությունը, գնահատել են հայցվորի (Դիմողի) գույքային և ընտանեկան դրության փոփոխությունը և կատարել ալիմենտի սահմանված չափը փոփոխելու վերաբերյալ համապատասխան եզրահանգում՝ հաշվի առնելով տվյալ գործի փաստական հանգամանքները, առանձնահատկությունները և կողմերի ներկայացրած հիմնավորումները:

Վերոշարադրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով Դիմողի կողմից դիմումում ներկայացված մյուս դիրքորոշումները ևս՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ վերջինս իր անհամաձայնությունն է հայտնում թիվ ԵԴ/62386/02/22 քաղաքացիական գործով ՀՀ դատարանների կողմից կայացված դատական ակտերի բովանդակության հետ: Մասնավորապես, Դիմողը վիճարկվող՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում, իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են թիվ ԵԴ/62386/02/22 քաղաքացիական գործով ՀՀ դատարանների գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափությանը:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն դիմումով Դիմողի կողմից բարձրացված հարցի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթի (իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) սահմանադրականության գնահատում, այլ թիվ ԵԴ/62386/02/22 քաղաքացիական գործի շրջանակներում ՀՀ դատարանների գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչա-

փության ստուգում, ինչը **դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:**

Ուստի՝ սույն անհատական դիմումով գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից **ենթակա է մերժման՝** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ **դիմումում առաջադրված հարցի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Արթուր Գևորգյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Ա. Վաղարշյան

Անդամներ՝ Հ. Հովակիմյան

Վ. Գրիգորյան

16 դեկտեմբերի 2024 թվականի
ՍԴԴԿՈ–66